ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 սեպտեմբերի 2013թ. թիվ 159-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզպետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Լոռու մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» թիվ 267-Ն որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Լոռու մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Լոռու մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2013թ. սեպտեմբերի 9
ք.Վանաձոր